# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Փետրվարի 5-ին, կիրակի.- Դ. կիր. զկնի Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 147): Պատարագի ընթացքում կատարվեց քահանայական ձեռնադրություն:

***Փետրվարի 12-ին, կիրակի.- Ե. կիր. զկնի Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մուշեղ վարդապետ Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Այլ դու երբ աղոթես, մտիր քո սենյակը, փակիր քո դռները և ծածուկ աղոթիր քո հորը, և քո հայրը, որ տեսնում է քեզ ծածկապես, կհատուցի քեզ հայտնապես» (Մատթ. Զ 6) բնաբանով քարոզ խոսեց (տես էջ 36):

***Փետրվարի 14-ին, երեքշաբթի.- ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ: Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի Տաճարն:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թադեոս վարդապետ Ջիրեկյանցը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Փետրվարի 19-ին, կիրակի.- Զ կիր. զկնի Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ վարդապետ Տիգրանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Փետրվարի 23-ին, հինգշաբթի.- Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց հազար երեսուն եւ վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Ես ձեռս դնեմ ի վերա սոցա» բնաբանով քարոզ խոսեց: Պատարագի ընթացքում կատարվեց սարկավագական ձեռնադրություն:

***Փետրվարի 26-ին, կիրակի.- Բուն Բարեկենդան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ադամ քահանա Մակարյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը «Բանն որ ընդ Հօր էութեան եւ համագոյ Սուրբ Հոգւոյն» (Շարականոց) բնաբանով քարոզ խոսեց (տես էջ 39):

*Մարտի 5-ին, կիրակի.- Բ. կիր. Քառասնորդական Պահոց (Արտաքսման):*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Զավեն քահանա Մարկոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Տեր Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*Մարտի 12-ին, կիրակի.- Գ. կիր. Քառասնորդական Պահոց (Անառակին):*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տրդատ քահանա Բոզիկյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 41):

*Մարտի 19-ին, կիրակի.- Դ. կիր. Քառասնորդական Պահոց (Տնտեսին):*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մխիթար աբեղա Գրիգորյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 43):

*Մարտի 26-ին, կիրակի- Ե. կիր. Քառասնորդական Պահոց (Դատավորին):*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Պարույր քահանա Ավետիսյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 46):